



Փողերի լվացման և ահաբեկչության
ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի
կառավարման գործընթացի կանոնակարգ

ՎՀ 08-17 Հ-1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
“ԴԻՎԻՍԱ ԷՅ ԷՄ” ՓԲԸ
ՏՆՕՐԵՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՄԱՆ ԹԻՎ ՎՕՑ -17
“29” Մարտի 2017 թ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐ ԵՎ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

Divisa AM CJSC

RA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC (“Divisa AM”) is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ (“Դիվիսա ԷՅ ԷՄ”) Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի կառավարման գործընթացը սահմանող կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) նպատակն է բացահայտել և գնահատել «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից իր հաճախորդներին մատուցվող ծառայությունների գործընթացում՝ գործունեության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ նաև՝ ՓԼ/ԱՖ) հնարավոր և առկա ռիսկերը, ինչպես նաև սահմանել բացահայտված ռիսկերի կառավարման արդյունավետ կառուցակարգերը:
- 1.2. Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում նաև բացահայտելու և գնահատելու ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Սույն կետում նշված ռիսկերի բացահայտումը և գնահատումն իրականացվում է համապատասխանաբար մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:
- 1.3. Ընկերության հիմնարար գործունեությունը՝ FX, CFD և թանկարժեք մետաղների ծառայությունների մատուցումն է բացառապես ոչ ռեզիդենտ պրոֆեսիոնալ թրեյդերներին և ինստիտուցիոնալ կառույցներին: Այդ ծառայությունները մատուցվում են MT4 առցանց առևտրային հարթակում՝ հաճախորդների համար բրոքերային հաշիվներ բացելու և նրանց համար առևտրային մասնակցություն ապահովելու միջոցով:

Divisa AM CJSC

RA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

- 1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է այնպիսի գործընկերային փոխհարաբերությունների հաստատմամբ, որոնք միտված են ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացում բարձրացնել ընկերության նկատմամբ հաճախորդների վստահությունը, ընկերության գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և բարեվարքությունը:
- 1.5. ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի կառավարման գործընթացում Ընկերությունը ղեկավարվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» ՀՀ Կենտրոնական Բանկի 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման դրույթներով, «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կանոնակարգով»>>, ներքին իրավական այլ ակտերով, ինչպես նաև ներդրումային ընկերությունների ոլորտում գործող միջազգային իրավական ակտերի պահանջներով և սկզբունքներով:
- 1.6. Սույն կանոնակարգը պետք է վերանայվի առնվազն տարին մեկ անգամ, և դրանում փոփոխություններ կարող են նախատեսվել ըստ անհրաժեշտության, ցանկացած ժամանակ՝ Ընկերության գործադիր տնօրենի հաստատմամբ:

II. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՎ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՄԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Divisa AM CJSC

RA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

2.1. Ընկերության գործադիր տնօրենը ընդհանուր պատասխանատվություն է կրում ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի արդյունավետ կառավարման համար: Այդ նպատակով Ընկերության գործադիր տնօրենը՝

- 2.1.1. սահմանում է Ընկերության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի կառավարման գործընթացը,
- 2.1.2. հետևում է Ընկերության աշխատակիցների կողմից սույն Կանոնակարգի պահանջների պահպանմանը,
- 2.1.3. տեղեկացնում է Ընկերության աշխատակիցներին սույն Կանոնակարգի պահանջների փոփոխության և լրացումների մասին,
- 2.1.4. համապատասխանության գլխավոր մասնագետի եզրակացությամբ վերանայում և հաստատում է ծառայությունների նոր տեսակների կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը, ինչպես նաև այն պոտենցիալ շահագրգիռ խմբերը որոնց այդ ծառայություններն առաջարկվելու են,
- 2.1.5. առնվազն տարին մեկ անգամ վերանայում է ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի կառավարման գործընթացը և միջոցներ ձեռնարկում դրա բարելավման ուղղությամբ,
- 2.1.6. օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության է ենթարկում այն աշխատակիցներին, ովքեր խախտել են սույն Կանոնակարգի պահանջները:

2.2. Ընկերության համապատասխանության գլխավոր մասնագետը պատասխանատու է ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի կառավարման քաղաքականության

Divisa AM CJSCRA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

իրականացման համար: Այդ նպատակով, համապատասխանության գլխավոր մասնագետը՝

- 2.2.1. պատրաստում և գործադիր տնօրենի հաստատման է ներկայացնում ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի կառավարման գործընթացը սահմանող կանոնակարգը և դրա փոփոխությունները,
- 2.2.2. դիտարկում է հնարավոր հաճախորդներին՝ համոզվելու, որ վերջիններս համապատասխանում են տվյալ ծառայությունների սպառողների համար նախատեսված չափանիշներին,
- 2.2.3. հնարավորության դեպքում դիտարկում է հաճախորդների վարքագիծը՝ համոզվելու, արդյոք հաճախորդները ծառայություններից օգտվում են պատշաճ ձևով,
- 2.2.4. հավաքում է ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման վերաբերյալ տեղեկատվություն, վերլուծում է այն և տեղեկացնում գործադիր տնօրենին,
- 2.2.5. եզրակացություն է ներկայացնում ծառայությունների նոր տեսակների կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև այն պոտենցիալ շահագրգիռ խմբերի վերաբերյալ, որոնց այդ ծառայություններն առաջարկվում են:

2.3. Համապատասխանության գործառույթներն իրականացնելիս Ընկերության համապատասխանության գլխավոր մասնագետն անկախ է և չի կարող ենթարկվել որևէ ներազդեցության, որը կարող է բացասաբար ազդել գործընթացի իրականացման անկողմնակալության, օբյեկտիվության վրա, վնասել իր գործառույթների պատշաճ իրականացմանը և խախտել սույն կանոնակարգի պահանջները:

Divisa AM CJSCRA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

2.4. Համապատասխանության գլխավոր մասնագետը, ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի կառավարման գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով, Ընկերության այլ ստորաբաժանումներից և պատասխանատու անձանցից կարող է պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, առանց որևէ խոչընդոտի ցանկացած ժամանակ մուտք գործել Ընկերության հաճախորդների տվյալների շտեմարան, ինչպես նաև մասնակցել Ընկերության կառավարման մարմինների, ստորաբաժանումների ժողովներին, առաջադրել քննարկման ենթակա հարցեր, ներկայացնել առաջարկություններ և նկատառումներ:

2.5. ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման քաղաքականությունը պատշաճ ձևով իրականացնելու նպատակով համապատասխանության գլխավոր մասնագետը սերտորեն համագործակցում է Ընկերության հաճախորդների սպասարկում իրականացնող և այլ պատասխանատու աշխատակիցների, այլ Ընկերությունների, լիազոր մարմնի և հանրային այլ կառույցների հետ:

III. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՎ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԸ

3.1. Սույն Կանոնակարգում օգտագործվող ՓԼ/ԱՖ ռիսկի հասկացությունները կիրառվում են Օրենքին համապատասխան՝ դրանց տրված իմաստով, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոնակարգով:

3.2. Հաշվի առնելով, որ Ընկերությունը գործունեություն է ծավալում բարձր ռիսկային ոլորտում, աշխատակիցները պետք է բավարար ուշադրություն և աջալրջություն ցուցաբերեն հաճախորդի կողմից դրսևորվող վարքագծի նկատմամբ և, կասկածելի գործարքի չափանիշներ հայտնաբերելու դեպքում՝ պարտավոր են այդ մասին,

Divisa AM CJSC

RA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

սահմանված կարգով, հայտնել համապատասխանության գլխավոր մասնագետին կամ գործադիր տնօրենին:

3.3. Ընկերությունն իր գործունեությամբ պայմանավորված, յուրաքանչյուր հաճախորդի հետ կապված իրականացնում է նրա ինքնության ճշգրտման, գործարար բնութագրի, ինչպես նաև նրա կողմից իրականացվող գործարքների կամ գործարար հարաբերությունների նպատակի ու բնույթի պարզմանն ուղղված պատշաճ ուսումնասիրություններ: Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելիս, Ընկերությունը, որպես կանոն, գնահատում է հաճախորդի ինքնության (օր՝ *փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, քաղաքական ազդեցություն ունեցող անձի, հաճախորդի՝ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվելու, բնակվելու կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից լինելու տեսանկյունից*), նրա գործարար բնութագրի (օր՝ *շուկայում և առևտրային հարթակում գործարքներ իրականացնելիս չարաշահումներ թույլ տալու, Ընկերության հետ գործարար հարաբերությունների հաստատման սկզբունքների, բարեվարքության կանոնների խախտման տեսանկյունից և այլն*), մատուցվող ֆինանսական ծառայությունների (օր՝ *վաճառքի վարման, ոչ հիմնական խորհրդավորության տրամադրման, առաջարկվող ծառայությունների թափանցիկության, բողոքների քննարկման և անհատական/մասնավոր տվյալների պաշտպանության տեսանկյունից*) և կազմակերպման բնույթի այլ հարցերի (օր՝ *շահերի բախումների, գրանցումների, ներքին հաշվետվությունների տրամադրման և այլն*) հետ կապված ռիսկերը և այդ ռիսկերի տեսակին ու մակարդակին համապատասխան՝ իրականացնում է դրանց կառավարման և զսպման քաղաքականություն:

3.4. Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում ՓԼ/ԱՖ ռիսկերի տեսանկյունից կասկածելի վարքագծի դրսևորումներ են գնահատվում հետևյալը՝

Divisa AM CJSCRA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

- 3.4.1. հաճախորդը փորձում է կանխիկ գումարներ մուտք անել իր հաշիվներ,
- 3.4.2. հաճախորդը գումարներ է մուտք անում իր հաշիվներ՝ միայն հաշիվներից, հետագայում՝ առանց առևտրային հարթակում գործարք անելու դրանք դուրս բերելու նպատակով,
- 3.4.3. կատարվում են հաշիվների համալրում, որոնք էականորեն գերազանցում են՝ առևտրային հարթակում գործարք անելու համար հաճախորդների կողմից իրենց դիմումներում նշված գումարների մոտավոր չափերը,
- 3.4.4. առևտրային հարթակում գործարքներ են կատարվում՝ առանց գործարքների հետ կապված ծախսերին ուշադրություն դարձնելու,
- 3.4.5. չափից ավելի օգտագործվում են բարդ կորպորատիվ մեխանիզմներ,
- 3.4.6. գործարքների վճարման համար նախատեսված միջոցները բխում են արտասովոր աղբյուրներից,
- 3.4.7. հաճախորդն անսովոր մտահոգություն է դրսևորում, մասնավորապես՝ անձնական տվյալների, գործունեության տեսակի կամ ունեցվածքի աղբյուրների վերաբերյալ գաղտնիություն ապահովելու առումով,
- 3.4.8. հաճախորդն, ընդհանուր առմամբ, բավարար չափով տեղեկացված չէ իր առևտրային գործունեության մասին,
- 3.4.9. հաճախորդը որևէ հետաքրքրություն կամ շահագրգռվածություն չի ցուցաբերում առևտրային հարթակում գործարքների հետ կապված ռիսկերի, միջնորդավճարների չափերի և ծառայությունների հետ կապված առաջարկվող այլ սակագների նկատմամբ,
- 3.4.10. հաճախորդը հանդես է գալիս որպես գործակալ այլ միավորի կամ անհատի անունից, սակայն խուսափում է բացահայտել այդ անձանց

Divisa AM CJSCRA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

տվյալները (բացառությամբ՝ օրենքով նախատեսված որոշ դեպքերի, որոնք կապված են առևտրային գաղտնիքի հետ),

- 3.4.11. հաճախորդն այն երկրից է (տարածքից) կամ այն երկրում է (տարածքում) հաշիվ բացել, կամ այն երկրում (տարածքում) ունի կենսական շահերի կենտրոն, որոնք, միջազգային ընդունված ստանդարտների համաձայն, համարվում են փողերի լվացման կամ թմրամիջոցների շրջանառության դեմ պայքարի տեսանկյունից չհամապատասխանող կամ լուրջ թերություններ ունեցող, ինչպես նաև <<հարկային դրախտ>> գնահատվող օֆշորային սահմանված տարածքներ,
- 3.4.12. հաճախորդը կատարում է անսովոր մեծ չափի, անսպասելի կամ անբացատրելի դրամային փոխանցումներ, (հատկապես բանկային փոխանցումներ, ներառյալ նաև այն երկրներ, որոնք ունեն բանկային գաղտնիքի մասին օրենսդրություն),
- 3.4.13. հաճախորդն իր հաշվին համալրում կատարում է այն պահանջի ներկայացմամբ, որ մուտքագրված դրամային փոխանցումները հետագայում դուրս բերվեն կամ փոխանցվեն երրորդ անձի կամ այլ ընկերություն՝ չունենալով գործարար հարաբերություն հաստատելու նպատակ,
- 3.4.14. հաճախորդն իր հաշիվների համալրումը կատարում է երրորդ անձի հաշիվների միջոցով,
- 3.4.15. հաճախորդն իր բանկային հաշիվների փոխարեն պնդում է օգտագործել այլ միջոցներ,
- 3.4.16. հաճախորդը հաշիվներ է բացում այնպիսի բանկերում, որոնք ունեն բացասական վարկանիշ կամ գտնվում են այնպիսի

իրավակարգավորման ներքո, որոնք ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից համարվում են չհամապատասխանող կամ լուրջ թերություններ ունեցող (բարձր ռիսկայնությամբ գնահատվող),

3.4.17. հաճախորդի՝ առևտրային հարթակում գործարք կատարելու եղանակները և ձևերը չեն համապատասխանում դիմումում առևտրային հարթակում գործարքներ կատարելու իր նշած փորձին:

IV. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՎ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

4.1. Ընկերությունը՝ ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի տեսակին և մակարդակին համապատասխան գործադրում է դրանց զսպման և կառավարման արդյունավետ մեխանիզմներ: ՓԼ/ԱՖ ռիսկերի տեսակը և մակարդակը գնահատելիս, ինչպես նաև անհրաժեշտ զսպման գործիքակազմը ընտրելիս և կիրառելիս, Ընկերությունը բացառապես հաշվի է առնում հաճախորդի, նրան մատուցվող ծառայությունների տեսակը, ձևը, գործարքների և գործարար հարաբերության բնույթը, ծավալները, ժամկետները, շրջանառվող միջոցների աղբյուրների ծավալները, շարժը, ինչպես նաև դրանց հետ փոխկապված այլ գործոններ, կատարում է համապատասխան համադրումներ ձեռք բերված տեղեկությունների և տվյալների հիման վրա, ինչպես նաև իրականացնում՝ Օրենքով, սույն Կանոնակարգով նախատեսված անհրաժեշտ այլ միջոցառումներ:

4.2. Ընկերությունը չի բացում անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ,

Divisa AM CJSC

RA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

հաշիվներ, որոնք սպասարկվում են կեղծ (շեյ) բանկերի միջոցով կամ որևէ կերպ կապված են նման բանկերի հետ:

4.3. Ընկերությունը չի ընդունում այնպիսի բանկերի միջոցով կատարված վճարումներ, որոնք ունեն բացասական վարկանիշ կամ գտնվում են այնպիսի իրավակարգավորման ներքո, որոնք ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսակնյունից չեն ենթարկվում պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև գրանցված են, գտնվում կամ գործում են չհամապատասխանող երկրում կամ տարածքում:

4.4. Ընկերությունն իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, չի ընդունում կանխիկ գումարներ և չի կատարում կանխիկ գումարներով գործարքներ:

4.5. Ընկերությունը չի ընդունում կամ չի կատարում երրորդ կողմին վճարումներ: Բոլոր վճարումները ընդունվում են և կատարվում են միայն հաճախորդի բանկային հաշվին:

4.6. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս Ընկերությունը պետք է պահանջի նաև, որպեսզի առաջին վճարումը կատարվի Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի ա-գ ենթակետերով սահմանված պահանջներին բավարարող ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվից:

4.7. Ընկերության գրասենյակում կամ գրասենյակից դուրս, անմիջապես Ընկերության աշխատակցի հետ առերես շփվելով՝ հաճախորդը հաշիվը բացելու նպատակով առձեռն ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները, որոնց իսկությունը աշխատակիցը հնարավոր բոլոր միջոցներով ստուգում է, այնուհետ, դրանք սկանավորում կամ պատճենահանում է և ներբեռնում տվյալ հաճախորդի անվամբ բացված համապատասխան էլեկտրոնային թղթապանակում: Այն դեպքում, երբ հաճախորդը հաշիվը բացելու նպատակով անհրաժեշտ բնօրինակ փաստաթղթերը

Divisa AM CJSCRA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

ներկայացնում է Ընկերության գրասենյակից դուրս, սակայն միննույն ցանցի, փոխկապակցված կամ այլ գործընկեր կազմակերպության գրասենյակում կամ աշխատակցին, ապա վերջիններս ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգելիս պատճենահանում են դրանք և յուրաքանչյուր էջի վրա դրոշմակնքում՝ «բնօրինակը տեսել է >> (original seen) կնիքով, նշում ստացման ամսաթիվը և ստորագրում դրանց վրա:

4.8. Առանց առերես շփման, առցանց դիմումի լրացմամբ հաշիվներ բացելիս, հաճախորդն անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնի՝ փաստաթղթերի տրման երկրում նոտարական կարգով վավերացված կամ իրավասու պաշտոնատար անձի կողմից ապոստիլով հաստատված: Ընդ որում, փաստաթղթում անգլերենով կամ ռուսերենով տեղեկատվության բացակայության դեպքում հաճախորդը պետք է ներբեռնի նաև այդ փաստաթղթերի թարգմանությունն անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

4.9. հաճախորդները հաշիվներ բացելիս պարտադիր ստորագրում են Ընկերության կողմից ներկայացված համաձայնագիր, որով հաստատում են իրենց ներկայացրած տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև համաձայնություն տալիս դրանց իսկությունը ստուգելու նպատակով Ընկերության կողմից ողջամիտ հայեցողության սահմաններում տարբեր գործակալություններին, աղբյուրներին հարցումներ ներկայացնելու և անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար:

4.10. ՓԼ/ԱՖ կանխարգելման գործընթացում սույն Կանոնակարգում սահմանված կասկածելի գործարքներ որակելու բավարար հիմքեր ի հայտ գալու դեպքում, Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի, առանց նախապես դրա մասին ծանուցելու, կասեցնել կամ դադարեցնել՝ հաճախորդի կողմից էլեկտրոնային

Divisa AM CJSCRA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Հասցե՝ Բաղրամյան 5. բնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն

գործարքային համակարգի՝ ամբողջությամբ կամ դրա մի մասի օգտագործումը կամ նրանց մուտքը՝ էլեկտրոնային գործարքային համակարգ:

4.11. Ընկերության էլեկտրոնային գործարքային համակարգը ՓԼ/ԱՖ կամ իր նախատեսված նպատակից բացի այլ նպատակով օգտագործելու դեպքում հաճախորդը կարող է ենթարկվել օրենքով սահմանված պատասխանատվության:

4.12. հաճախորդների նույնականացման համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ստուգմանն ուղղված գործողությունները, հաճախորդների ռիսկային կատեգորիաներում (բարձր, միջին, ցածր) դասակարգումը և ըստ այդմ, համապատասխան պատշաճ ուսումնասիրությունների անցկացումը, ինչպես նաև գործարքների կասկածելի որակելու և դրանից բխող անհրաժեշտ գործողությունների կատարման կարգը սահմանվում են Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգով:

Divisa AM CJSC

RA: +374.10.580972 || UK: +44.203.318.4573 || US: +1.888.488.DCFX || NZ: +64.9.909.7875 || Email: info@divisa.am | Web: www.divisa.am

Divisa AM CJSC ("Divisa AM") is Authorised and Regulated by the Central Bank of Armenia (License Number 0011).

Registered office at 5 Baghramyan Street, apt. 11, 0019, Yerevan, Republic of Armenia.

Դիվիսա ԷՅ ԷՄ ՓԲԸ ("Դիվիսա ԷՅ ԷՄ") Լիազորված է և Կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (Լիցենզիայ N 0011).

Չասցե՝ Բաղրամյան 5. քնակարան 11, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն